Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5

Ք. Երևան, 16 օգոստոսի 2022 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Սարգսյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը հաստատելու մասին

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի օգոստոսի 16-ի նիստի օրակարգային 1-ին հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումը՝

➢ **Արման Պողոսյան՝** կարծում ենք, որ օրակարգի 1-ին հարցի քննարկման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով նախատեսվում է, որ բյուջեների կատարման կարգը սահմանում է կառավարությունը: ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատվել են N 1 հավելվածով նախատեսված տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ ֆինանսավորվող ծրագրերի և միջոցառումների, այդ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների, բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման տարրերի՝ համաձայն NN 3, 4 և 5 հավելվածների: Հետևաբար, յուրաքանչյուր միջոցառման գծով հատկացված միջոցների գծով խնայողությունները ինքնաբերաբար շարունակում են մնալ տարեկան հաշվեկշռում և փոխանցվում են հաջորդ եռամսյակ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 7 անդամների 6 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշումը:

2. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին հավանություն տալու մասին

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 7 անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին:

3. Խորհրդի անդամ Մելինե Բեգլարյանի անդամությունը դադարեցնելու վերաբերյալ:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի օգոստոսի 16-ի նիստի օրակարգային 3-րդ հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

➢ **Արթուր Ասոյան՝** 3-րդ հարցին քվերակում եմ «վերապահումով կողմ»՝ խնդրելով, որ խորհրդի անդամ Մելինե Բեգլարյանի անդամությունը դադարեցնելու դիմումը ներկայացվի համապատասխան կազմակերպության կողմից՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3.1-րդ մասի 4-րդ կետի պահանջների: Մաժամանակ, հաշվի առնելով, որ գրասենյակը թափուր տեղ առաջանալու պահից նոր անդամներ ներգրավելու համար երկշաբաթյա ժամկետում կարող է հրապարակել հայտարարություն միայն, եթե խորհուրդը որոշում է կայացրել նոր անդամ ընտրելու վերաբերյալ, առաջարկում եմ խորհրդի քվեարկությանը դնել նաև նոր անդամ ընտրելու հարցը՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի N 1000-Ն որոշման 1-ին հավելվածի 26-27-րդ կետերի իրավակարգավորումների:

Տեսչական մարմնի քարտուղարությունը կդիմի համապատասխան կազմակերպությանը՝ անդամի փոփոխության պարզաբանման վերաբերյալ: Պատասխանը ստանալուց հետո հարցը կքննարկվի առաջիկա նիստի օրակարգում:

4. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 7 անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

8/19/2022

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ